

ՀԱՐԱՍՈՒԹԵԱՆ ճՇԽԱՐԻՑ**ԻՄԱՅՈՒՄ**

Հարստութիւնդ, եքէ Աստուծմէ առի՛ր, վստահ եղի՛ր եւ հաւատա՛, որ զաւակիդ կրկին առատութեամբ կու տայ, եքէ ուզես: Պիտի ըսես, ի՞նչպէս եքէ ուզեմ: Ինչ, որ Աստուծմէ պարգեւ առիր եւ ունիս դարձեալ Աստուծոյ պարգեւէ, իսկ զաւակիդ բարեպաշտութեանդ օրինակը ձգէ՛ եւ ոչ թէ հարստութիւնդ: Աղքատներու երամին ըրած զբութեանդ անոր վերակացու ձգէ Աստուծոյ անսահման զբութիւնը եւ ոչ թէ փայլուն ոսկին: Սորվեցնիր ողորմութեան բարիքը եւ ոչ թէ տմարդութեան չարիքը: Սորվեցնիր զԱստուծ պաշտել եւ ոչ թէ մամնան: Սորվեցնիր երկնաւոր բաներու ցանկալ եւ ոչ թէ երկրաւորներուն: Վարժեցնիր պատուասէր ըլլալ երկնային պատիին եւ ոչ մեր սին կեանքի ծաղկաթափ փառքին: Սորվեցնիր սիրել ոչ թէ առօրեայ անցաւոր կեանքը՝ լի դառնութեամբ ու թշուառութեամբ, այլ՝ կայունը, մնայունը եւ բիրապատիկ հանգիստով լեցունը: Իսկ եքէ անիրաւութենէ, զրկանքներէ հաւաքած հարլստութիւնդ զաւակներուդ պիտի բողոս, զիտցի՛ր եւ հաւատա՛ թէ, ուր որ անիրաւութիւն եւ զրկանք կայ, ինձ Աստուծոյ բարկութիւնը կը գտնուի:

Սարգիս Շնորհափ (Յորդորակներ)**ՍՐԲՈՒԹԻՒՆՆԵՐ**

Եկեղեցւոյ Սրբազն յարկէն ներս, նուիրական սպասներու համագումարը սրբութիւնն կարելի է կոչել:

Սրբութիւններն են՝ Խաչը, Աւետարանը, Սկիհը, Մասնատուփը, մասունքներով նուիրագործուած նանաչները, եւայլն:

Աւագ տօներուն եւ ընդհանրապէս Տաղաւարներուն տօնացոյցը կ'արձանագրէ Դնին սրբութիւնն ի վերայ բազմոցի յատեան...: Ինչ որ կը նշանակէ գանձատունէն դուրս բերել վերոյիշեալ սպասները եւ զանոնի տեղատրել Ս. Սեղանի բազմոցի սանդղամատերուն վրայ: Տօնին վեհութիւնն ու ոգեկոչումը առաւել շշշտելու, որպէս հոգեւոր խանդավառութեան արտայայտութիւնը հաւատացեալներուն:

Տաթեւացի Վարդապետ կ'աւելցնէ ըսելով, թէ վերոյիշեալ սրբութիւնները վկայութիւններ են, Քրիստոսի տնօրինական կեանքը պատմող:

Նման առիթներով նաեւ Ս. Սկիհը շուշափայով ծածկուած կը դրուի Ս. Սեղանին վրայ, անոր վրայ հանգչեցընելով մասնատուփը՝ Ս. Հաղորդութեամբ լեցուն:

ՈՍԿԵՂԵՆ ՀԱՍՏՈ

Մի՛ հեռանաք իմ օրէնքներէս, որովհետեւ ես եւս հնազանդ զաւակ էի հօրս եւ սիրելի՝ մօրս աչքին, որոնք կը սորվեցնէին ինծի եւ կ'ըստին . «Մեր խօսքերը սրտիդ մէջ տեղաւորէ՛, պահէ՛ մեր պատուիրանները եւ ապրի՛»:



ՅՈՒ ԽՈՍՔ ԻՆ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ՀԱՄԱՆԵՐՈՒՄ ԼՂՅԱ
(Ա. 119.105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 4 ԴԵԿԵMBER 2022

ԹԻՒ 49

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՏՈՒԱԾԱՇԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես. 36.22-37: Ա. Թս. 4.1-11: Ղկ. 13.1-9

ԱԽԵՏԱՐԱՆ ԸՍ ՂՈՒԿԱՍՈՒ 13.1-9

Ոմանք եկան Յիսուսի եւ պատմեցին այն գալիլիացիներուն մասին, որոնք Պիղատոսի կողմէ սպասնուեցան, երբ Աստուծոյ զոհ կը մատուցանէին: Յիսուս անոնց ըսաւ. «Կը կարծէ՞ք, թէ սպասնուող գալիլիացիները միւս բոլոր գալիլիացիներէն աւելի մեղաւոր էին, որ այդպիսի վախճան մը ունեցան: Ո՛չ: Կ'ըսեմ ձեզի, որ եքէ չապաշխարէ՛ դուք բոլորդ ալ նոյնպէս պիտի մեռնիք: Կամ ի՞նչ կը մտածէք այն տասնութ մարդոց մասին, որոնց վրայ ինկաւ աշտարակը Սելովամի մէջ, եւ սպասնոց զանոնք: Անոնք աւելի՞ յանցաւոր էին Երուսաղէմի բոլոր բնակիչներէն: Ո՛չ: Կ'ըսեմ ձեզի, որ բոլորդ ալ նոյնպէս պիտի մեռնիք՝ եքէ չապաշխարէք»:

Անոնց հետեւեալ առակը պատմեց. «Մարդ մը կար, որ իր այգիին մէջ թենի մը տնկած էր: Երբ ժամանակը եղաւ, բուզ քաղելու զնաց, բայց թենիին վրայ պտուղ զգտաւ: Այգեպանին ըսաւ. «Այս երրորդ տարին է, որ կու զամ թուզ քաղելու, բայց չեմ գտներ: Ուստի կտրէ՛ զայն, ինչո՞ւ անիմաստ կերպով տեղ գրաւէ»: Այգեպանը պատասխանեց. «Տէ՛ր, բող այս տարի ալ մնայ: Ես իր շուրջի հողը կրկին կը փորեմ եւ պարարտացուիչ կը դնեմ: Այս ձեւով թերեւս պտուղ տայ, ապա թէ ոչ գալ տարի կտրէ զայն»:

Աշխարհական թէ հոգեւորական, ամէնուն պարտէն է աշխատիլ, որ մաքուր ըլլանք մեր խղնմտանքին եւ Աստուծոյ առջեւ, սիրով ու լայնախոն ոգիով յարգենք մեր Ս. Եկեղեցւոյ կարգն ու կանոնը, գործնականապէս աշխատինք անոր բարեկարգութեան եւ պայծառութեան, եւ ո՛չ թէ գլուխ բոնելով եւ անձնական կարիքներու հետեւով:

Դժբախտաբար, ոմանք ո՛չ թէ միայն չեն գիտեր խոստովանութեան եւ ապաշխարութեան նշանակութիւնը եւ չեն զգար անոնց պէտքը իրենց կեանքին մէջ, այլ՝ ձեւական եւ աւելորդ բաներ կը նկատեն զանոնք:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Ս. ԹԱՂԻՉՈՍ ԵՒ Ս. ԲԱՐԹՈՂԻՄԵԴՈՍ ԱՌԱՅԵԱԼԵՐՈՒ ՏՕՆ

Ամեն տարի, Դեկտեմբեր ամսուանը ընթացքին կը յիշատակով Յիսուսի առաջին աշակերտներէն՝ Ս. Թաղիչոս եւ Ս. Բարթողիմէդոս առաքեալերուն տօնը։ Անոնք Հայաստանի մէջ քրիստոնէութեան քարոզութիւնը սկսած են կատարել առաջին դարէն սկսեալ, Յիսուսի համբարձումէն ետք։

Հայաստանը այդ օրերուն կը նկատւէր կարեւոր եւ քազմամարդ երկիր։ Ս. Թաղիչոսի եւ Ս. Բարթողիմէդոսի կը վիճակով Հայաստանէն ներս քրիստոնէութիւնը տարածելու դժուար գործը տրուած ըլլալով, որ այդ տարիներուն հայ ժողովուրդը քազմաստուածեան կրօն ունէր։

Ո՞Վ ԷՐ Ս. ԹԱՂԻՉՈՍ

Յիսուսի 12 աշակերտներէն մէկն էր։ Յայտնի չէ, թէ երբ ծնած է, բայց նահատակուած է իր քարոզչական առաքելութեան նամբուն վրայ՝ շուրջ 46 թուականին։

Թաղիչոս առաքեալ կը յաջողի քրիստոնէութեան կրօնը տարածել հայոց արքունական պալատէն ներս՝ քրիստոնեայ մկրտելով Սանդուխտ կոյսը, որ Սանդուկ թագաւորին աղջիկն էր։ Թագաւորը կը փորձէ իր աղջիկը վերադարձնել քուրմերու պաշտամունքին եւ ձախողելով սպաննել կու տայ թէ՛ Սանդուխտ կոյսը, թէ՛ Թաղիչոս առաքեալը։ Մինչ այդ Արտագ գաւառի բնակչութիւնը, հետեւած ըլլալով Ս. Թաղիչոսի քարոզութեան, անոր յիշատակին կը հիմնէ քանի մը, որուն չորս աւանդատուներէն մէկուն մէջ գոյութիւն ունի տապանաքար մը, որուն վրայ արձանագրուած է, թէ հոն թաղուած է Ս. Բարթողիմէդոս Սուսքեալը։

Վաճառքը ներկայիս կիսաւեր վիճակի մէջ է։

Շնորհիւ Ս. Թաղիչոս եւ Ս. Բարթողիմէդոս առաքեալերուն, Հայաստանեայց Մայր Եկեղեցին ԱՌԱՔԵԼԱԿԱՆ կը կոչուի՝ Յիսուսի առաքեալերու նախանեութեամբ հիմնուած ըլլալուն հոգեւոր կեդրոններէն մէկը։

Ո՞Վ ԷՐ Ս. ԲԱՐԹՈՂԻՄԵԴՈՍ

Բարթողիմէդոս Յիսուսի 12 աշակերտներէն մէկն էր։ Անոր կը տրուի նաեւ Նաբանայէլ անունը, որ կը նշանակէ «Յասուծոյ Նուէր»։

Ան քրիստոնէութիւնը քարոզած է Հնդկաստանի, Պարսկաստանի, Արարիոյ եւ Հայաստանի մէջ։ 66 թուին տեղի ունեցած է իր նահատակութիւնը։

Բարթողիմէդոս Ս. Թաղիչոս առաքեալին հետ, կը նկատուի Հայաստանի մէջ քրիստոնէութեան առաջին քարոզիչը։

Առաքեալը Հայաստանի մէջ իր քարոզչական աշխատանքը սկսած է Գողքան գաւառէն, ապա՝ Սիւնեաց, Արարատեան եւ Վասպուրական նահանգներուն մէջ։ Ան կը յաջողի նաեւ հայոց արքունի շրջանակներէն ներս ալ քարոզութիւն կատարել։ Քրիստոնեայ կը մկրտէ Սանատրուկ թագաւորին քոյրը՝ Ոգուին եւ հազարացիս Տերենտիոսը։ Հետեւանքը ա՛յն կ'ըլլայ, որ թագաւորը սպաննել կու տայ թէ՛ քոյրը, թէ՛ հազարացիսը, թէ՛ առաքեալը։

Հայ ժողովուրդը, ի յիշատակ Ս. Բարթողիմէդոսին, չորրորդ դարուն Վասպուրականի Աղքակ գաւառին մէջ կը շինէ քանի մը, որուն չորս աւանդատուներէն մէկուն մէջ գոյութիւն ունի տապանաքար մը, որուն վրայ արձանագրուած է, թէ հոն թաղուած է Ս. Բարթողիմէդոս Սուսքեալը։

Վաճառքը ներկայիս կիսաւեր վիճակի մէջ է։

Շնորհիւ Ս. Թաղիչոս եւ Ս. Բարթողիմէդոս առաքեալերուն, Հայաստանեայց Մայր Եկեղեցին ԱՌԱՔԵԼԱԿԱՆ կը կոչուի՝ Յիսուսի առաքեալերու նախանեութեամբ հիմնուած ըլլալուն հոգեւոր կեդրոններէն մէկը։

ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍ ԳԱՍ

ՔՐԻՍՏՈՍԻ ԽՈՍՔԻՆ ԶՈՐՈՒԹԻՒՆԸ

Ձեր ուշադրութիւնը պիտի ուղեմ հրաւիրել Մտք. 17.18-ին մէջ եղող բառի մը վրայ։ Այդ բառն է՝ «սաստեց»։ «Սաստեց» չար ոգին։ Յիսուս չար ոգին դուրս հանելու համար պատանին, չկորուցաւ անոր դէմ, այլ՝ պարզապէս բացաւ իր բերանը եւ արտասանեց ազատագրութիւն բերող իր խօսքը։ Ան իր խօսքով սաստեց չար ոգին, ճիշդ ինչպէս իր խօսքով սաստեց փոթորկած ծովը, կամ իր խօսքով տիեզերքը գոյութեան բերաւ։

ՄԵՐ ՍՈՒՐՎԵԼ ԻՔ Հ ՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Քրիստոսի խօսքին զօրութեան դիմաց՝ Սատանաները իսկոյն կը փախչին։ Եւ ոչ միայն կը փախչին, այլև կը սպաննուին։ Յայտնութիւն 19.21-ին մէջ կը կարդանք, որ «զազանին զօրքերը սպաննուեցան ձիուն վրայ հեծեալին սուրով, որ կ'ելլէր անոր բերանէն»։ Գազանը՝ Նեռն է, հեծեալը՝ Քրիստոս, հեծեալին բերանէն ելլող սուրը՝ Քրիստոսի խօսքը։ Սերտենք Աստուածաշունչը, որպէսզի Քրիստոսի խօսքին սուրով գինուինք։ Այդ Սուրին դիմաց, ոչ Սատանան եւ ոչ ալ սատանայութիւն ընող մարդիկ կրնան դէմ դնել։

ՕՐՀՆԵԱԼ Է ԱՍՏՈՒԾ

ԵԹԵ ԿԱՍ ԵՐԱ Կ'ՈՒԶԵՍ...

ԵՐԲ ԱՊՈՐՔԵՐՈՒՐԴ ՊԱՏԱԽԱԽԱՆԱՀԱԾ ԿՐ ՓՆՏՈՒԵ ՎԱՏՈՒԾՈՒ՝ Կարդա՝ ԱՎԱՄՈՒ

Մեծ է Տէրը, մեր Աստուածը, եւ ամէն օրինութեան արժանի՝ իր քաղաքին մէջ, իր սուրբ լերան վրայ։ Իր քարձրութեամբ գեղեցիկ է, ամբողջ աշխարհի ուրախութիւնն է Սիոն լեռը, Աստուծոյ բնակավայրը, մեծ Թագաւորին քաղաքը։ Աստուած ներկայ է անոր ամրութիւններուն մէջ, եւ ցոյց տուած է՝ թէ ինքն է իրաւ ամրոցը։

Ահա թագաւորները հաւաքուեցան, եւ միասնաբար յարձակեցան քաղաքին վրայ, բայց երբ զայն տեսան՝ ապշեցան, զարհութեցան եւ փախուստի դիմեցին։ Դողը բռնեց զիրենք, ինչպէս երկունքը կը բռնէ ծննդական կինը կամ ինչպէս, որ արեւելքն փշող հովը կը խորտակէ Թարշիշէն եկող նաւերը։ Ինչ, որ լսեր էինք՝ այժմ մեր աչքերով տեսանք Ամենակալ Տիրոց քաղաքին մէջ, մեր Աստուծոյն քաղաքին մէջ։ Աստուած կանգուն ախտի պահէ զայն յախտեան։ Քու տաճարին մէջ, ո՛վ Աստուած, մենք մշտական հոգածութեանդ մասին կը խորինք։ Քու անուն, ո՛վ Աստուած ծանօթ է աշխարհի չորս ծագերուն, եւ բոլորը թեզ կ'օրիերգեն։ Արդար են գործերդ։ Թող ուրախանայ Սիոն լեռը, թող ցնծան Յուդայի քաղաքները, արդար դատաստաններուն համար։

ԱՊՈՐՔԵՐ ԱՎԱՄՈՒՍՎԱՐՔԵՐԸ